

«ԹԱՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏԻ ՓԱՆ» ԳՈՒԳ ԵՐ 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆՄԲԵՐ 1, 1903

ԹԻՒ 11

ՅՈՐԳԱՆԱՆ

Աստուածաշնչին մէջ Յորդանան գետը առաջին անգամ կը յիշուի Արրահամի Ղովտէ բաժնուելուն առիթով, երբ Ղովտ Յորդանանու այն դաշտը ընտրեց իրը և իրեն բնակավայր, անոր շատ բարեբերը ըլլալուն համար, բայց յետոյ շատ պատճառներու նեցաւ զոչալու որ իր անձնասիրական և աշխարհային շարժառիթներով այսպէս ըրած էր, Հին կտակարանի ժամանակները այս գետին հետ կապակցութիւն ունեցող մեծ դէպքն եղաւ Խորայելացոց անկէ անցնելը Աւետեաց երկիրը մանելու ճամբուն վրայ, երբ Յորդանանու ջուրերը բաժնուեցան մէկ և միւս կողմը և Խորայելացիք անոր մէջէն անցան ցամաքով, Նոր կտակարանի մէջ պատմուած դէպքը, որու կը գառնան մեր խորհուրդները տառջին անգամ, մեր Տէրոջ մկրտութիւնն է։ Այս սուրբ արարողութեան կատարուած ճիշտեղը չենք գիտեր, բայց կը կարգանք թէ ուրիշ ժամանակ մը Յովհաննէս կը մկրտէր Այնտոնի մէջ, և կը կարծուի թէ Յիսուսի մկրտութիւնը հոն տեղի ունեցաւ։

Այս գետին անունը կը նշանակէ Իջնող։ Եւ անիկա գրեթէ 700 ոտք կ'իջնէ Գալիլեայի ծովուն և Մեռեալ ծովուն մէջտեղ։ Անոր վրայ քիչ կամուրջներ կան, և ընդհանրապէս ոտքով կ'անցնուի գետէն։ Հոս ցոյցուած կամուրջը Մեռեալ ծովէն քիչ հեռու է։

Բնական է որ կրօնական տօնախմբութիւններու ատեն այս գետը սիրելի ըլլայ Գրիստոնեաներու։ Ուխտաւորներուն Այնտոնի մէջ լողանալու սովորութիւնը վայելու է. և մանկիկներու մկրտութեան համար անկէ տիկերով ջուր առնելը, ինչպէս շատ


անգամ կ'ըլլայ, գովելի է. պարտաւորով որ չկենայ այն սիւսլ գաղափարը թէ ջուրը մեղքեր լուարու համար մասնաւոր ազդեցութիւն մը ունի։



ՀՐԵՏՏԱԿԻ ՓՈՒՐԻԿ ԱՐՁԱՆԸ

Ամառուան պայծառ առաւօտ մը քանի մը տղաք կը սպասէին գիւղական դպրոցի մը դուռը։ Իրարու հետ կը խօսակցէին և մտիկ կ'ընէին թռչունի մը զուարթ երգին ձայնը որ ճամբուն միւս կողմէն կու գար։ Եւ ահա

մասնաւոր կերպով մը, որ ժամերուն անցնելը չէր զգացուեր, երբ դպրոցն աւարտեցաւ, վարժապետը իր գրասեղանէն հանեց սետուկ մը որուն վրայ թռչուններու պատկերներ նկարուած էին։ Տղաքը գրասեղանին քով կանչեց և ըսաւ թէ անոնց ամէն մէկուն մէյլէկ փոքրիկ ընծայ բերած է։ Այնուհետեւ, մինչ տղաքը իր շուրջը կայնած էին, գրասեղանէն հանեց ճերմակ և կարմիր խեցիներ և քանի մը գեղեցիկ խաղալիկներ, զորոնք ա-



վարժապետը եկաւ և իրեն ամէն ժամանակուան սովորութեանը պէս զուարթութեամբ և սրտադին ըսաւ «Բարի եկիք, տղաք»։ «Բարի եկիք, վարժապետ», դռնցիլն աշակերտները։ Մեծ մատերու շխուռէն մաշած գիրքերը դուրս հանուեցան գրասեղաններէն և դպրոցն սկսաւ։ Ծոյլ տղաքը այդ առաւօտ մտացան յօրանջել, երես թթուեցնել և վազանձի վափափել, վասն զի վարժապետը այնպէս քաղցրութեամբ կը խօսէր անոնց հետ և անոնց բոլոր դասերը այնպէս կը դիւրացնէր կը պարզէր,

նոնց տուաւ անուշ և հաճելի խօսքերով, Բայց ամէնէն սիրուն բանն էր հրեշտակի պղտիկ մէկ արձանը։ Ոնիկա կը կանգնէր իր ստորտիկ ճերմակ ձեռքերը կուրծքին վրայ ծալած, երեսը վեր տնկած, և այնպէս գեղեցիկ և մաքուր կ'երևնար, որ տղաք աչքերնին անոր վրայ տնկեցին հիացումով։ Անոնք անոր նման բան երբեք տեսած չէին։

«Այս փոքրիկ հրեշտակը այնչափ սիրուն է որ չկրնար տրուիլ տղու մը որ սրտով բարի և հաւատարիմ չէ։ Բայց ձեր մէջէն ով որ վաղը բերէ

երկրիս վրայ գտնուած ամէնէն պայ-
ծառ բանը, հրեշտակը ան պիտի ըն-
դունի:”

Տղաքը իրարու վրայ նայեցան,
և չէր երևնար թէ հասկցան վար-
ժապետին ըսածը: Բայց վարժա-
պետը ա՛լ ուրիշ բան չըսաւ, և անոնք
սուռն գացին:

Հետեւեալ օրը դասերուն լմննալէն
ետքը, տղաքը վարժապետին բոլոր-
ափքը հաւաքուեցան անոր ցուցնելու
համար իրենց բերածները: Անոնցմէ
մէկը փայլուն քարեր ժողված էր ճամ-
բուն քովէն: Մէկը արծաթի պղտիկ
կտոր մը այնքան յղկեր էր որ հայելիի
պէս կը փայլէր: Ուրիշ մը ժամացոյցի
մետալիոն մը բերած էր, զոր տուած
էր անոր հայրը: Եւ Յովսէփ, վաճա-
ռականին որդին, բերած էր կուրծքի
գնդաւեղ մը, որուն կեղերոնը աղա-
մանդի նման փայլող քար մը կար:
«Ս՛հ, ինչ ամէնէն պայծառն է:”
պոռայց Յովսէփ: «Բայց ո՛ր է փոք-
րիկ Գէորգը:” հարցոյց վարժապետը,
չորս կողմը նայելով: «Մենք չենք
կրնար որոշում տալ մինչև որ Գէորգ
չբերէ իր նուէրը:”

Այդ վայրկեանին փոքրիկ Գէորգ,
հացադործին միակ մանչը, վազըով
ներս մտաւ: Իր ձեռքերուն մէջ զը-
րոնք սիրուն կերպով կուրծքին
վրայ բռնած էր, կար ձիւնի պէս
ճերմակ աղաւնի մը: Աղանիին
վրայ տեսնուած կարմիր կաթիլ-
ներ կը ցուցնէին թէ անիկա վիրա-
ւորուած էր:

«Ո՛հ, վարժապետ:” աղաղակեց
Գէորգ, «ես պայծառ բան մը կը
փնտռէի, և այս խեղճ աղանիին
պատահեցայ: Անգութ տղաք քարեր
կը նեակին անոր վրայ, և ես զանիկա
արագ մը բռնեցի և հոս վազեցի: Ո՛հ,
կը վախնամ թէ պիտի մեռնի:”
ձիչդ Գէորգի խօսած ժամանակը ա-
ղանին գոցեց իր քնքուշ աչքերը, և
Գէորգի պարանոցին վրայ ինկաւ, կա-
խեց իր փոքրիկ գլուխը, և մեռաւ:

Գէորգ իր փոքրիկ ծունկերուն վրայ
ինկաւ վարժապետին դրասեղանին
քով, և իր աչքերէն երկու խոշոր
արցունքի կաթիլներ ինկան խեղճ ա-
ղանիին կտորած թևերուն վրայ:

Վարժապետը մեռած թուշունը ա-
ռաւ Գէորգի ձեռքերէն, և զանիկա
փափկութեամբ դրաւ իր դրասեղանին
վրայ: Յետոյ աշակերտներուն դառ-
նալով ըսաւ, «Տղաքս, երկրի վրայ
չկայ գթութեան արցունքէ աւելի
պայծառ բան:” «Ճերմակ հրեշտակը


տուէք փոքրիկ Գէորգին:” պոռայցին
տղաքը: «Մենք հիմա դիտենք թէ
ինչ ըսել ուղեցիք, և անոր նուէրը
մեզմէ ունէ մէկուն նուէրէն աւելի ա-
ղէկ է:”

Ինաստուն վարժապետը Գէորգի
տուաւ ճերմակ հրեշտակը, և դուք
ամէնդ ալ կ’ըսէք անշուշտ թէ անիկա
արժանի էր այդ պարգևին:



ԹՐԻՆԻԹԻ ԵԿԵՂԵՑԻ Ի ՆԻՒ ԵՈՐԲ

Նիւ Եօրք քաղաքին ընդարձակուե-
լուն հետեւանքներէն մէկն
եղած է եկեղեցիներէն շա-
տիննոր տեղեր փոխադրուե-
լը: Ակիդանքը քաղաքը կը
գրաւէր հարաւային ծայրը
միայն այն նեղ կղզիին որ
կ’իյնայ Հըտսըն գետին և
Իսթըրն (Արևելեան) կոչուած
գետին մէջտեղ: Քանի մեծ-
ցաւ քաղաքը այս հարաւա-
յին ծայրը հետզհետէ եկան
գրաւեցին վաճառատուններ,




և բնակութիւնները դէպ ի վեր գա-
ցին: Եկեղեցիներ, որոնք երբեմն կը
չըջապատուէին բազմաթիւ ժողո-
վուրդներէ, կամաց կամաց ետև
թողուեցան, վասն զի ժողովուրդնե-
րը նոր տեղեր հաստատեցին իրենց
բնակութիւնը հեռուն դէպ հիւսիս:
մինչև որ վերջապէս հարկ եղաւ ե-
կեղեցիներն ալ այն տեղերը շինել:
Օրինակի համար Պրոտուէյ թէպէրնէ-
քը: քաղաքին գլխաւոր ժողովական
եկեղեցին, երկու անգամ հարկ
եղած է ծախել և նոր շէնք մը
շինել: և ժողովուրդը գեռ անց-
եալ տարի մտաւ իր նորաշէն շքեղ
շէնքը որ քանի մը մլոն հիւսիս կ’իյ-
նայ Լքուած շէնքէն:

Թրինիթի (երրորդութիւն) եկեղեցւոյն
ժողովուրդը տակաւին իր կրօնական
պաշտամունքը կը կատարէ իր հին շէն-
քին մէջ, որ քաղաքին ամէնէն բանուկ
մասին մէջ կը գտնուի Ուոլ փողոցին մօ-

տիկը: Այս փողոցը դրամական զլխա-
ւոր կեդրոնն է Ամերիկայի, և ամէնէն
մեծ երէն մէկը աշխարհի մէջ: Եկեղեց-
ւոյ շէնքը կանուխ շինուած է, և եկե-
ղեցին շատ հարստացած է, վասն զի
անոր կալուածներուն գինը միշտ
կը բարձրանայ: Եկեղեցին ճիւղ ինը
եկեղեցի ունի իր հսկողութեան ներ-
քե, և նպաստ կու տայ քսան ուրիշ
եկեղեցիներու, որոնք առաքելութեան
գործ կ’ընեն քաղաքին աղքատ թա-
ղերուն մէջ: Կը պատկանի Բողոքա-

կանաց Եպիսկոպոսական
յարանուանութեան, որ
Բողոքական ամէնէն մեծ
յարանուանութիւնն է քա-
ղաքին մէջ և ունի իրը
150 եկեղեցի:

Թրինիթիի զանգակա-
տունը 120 կանգունէն ա-
ւելի բարձրութիւն ունի,
և առաջ քաղաքին առա-
ջին առարկան էր, զոր կը
տեսնէին նաւահանգիստ
մտնողները: Բայց հիմա
անոր մօտ 15, 20 և մինչև
25 յարկերով շատ շէնքեր
կան բարձր, այնպէս որ
հիմա այլ ևս նշանաւոր չէ
և այնքան ուշադրութիւն
չգրաւեր: Չենք կարծեր
թէ բարձր շէնքերը կ’աւել-
ցնեն քաղաքներուն գե-
ղեցկութիւնը կամ գա-
նոնք աւելի փափաքելի
կ’ընեն բնակելու համար:




ԻՆՉՊԵՍ ՁԵՌՔ ԲԵՐԱՒ ԻՐ ԴԻՐՔԸ
Այն տղան որ իր գործատէրոջ կա-
րելի եղածին չափ քիչ գործ կ’ընէ,
երբեմն կը զարմանայ թէ ինչու իրեն
աւելի բարձր դիրք մը չտրուիր վա-
ճառատան կամ գործատեղիին մէջ,
մինչ իրմէ քիչ փայլուն մէկ ընկերը
որ կը գործէ ուրիշ հաստատութեան
մը մէջ, շատ արագ յառաջ գացած
է: Հաւանօրէն պատճառն այն է որ
իրմէ աւելի քիչ փայլուն ընկերը ա-
ւելի հաւատարիմ է եւ աւելի խղճմը-
տութեամբ կը գործէ, միշտ ընելով
բաւականէն աւելին, իր համեստ թո-
շակը ստանալու համար: Կը սիրէ իր
գործը, և երբ պատեհութիւն ըլլայ,
աւելի աղէկ պաշտօն մը կը տրուի ի-
րեն, զոր կը կատարէ հաւասար հա-
ւատարմութեամբ: Ասոր մէկ լուսա-
բանութիւնը կը տեսնուի հետեւեալ
իրական միջադէպին մէջ:
Տասնրկեց տարեկան տղայ մը գործ

կը փնտռէր Ամերիկեան մեծ քաղաքի մը մէջ: Երկու շաբաթ պարապ տեղ սպասեց և գրեթէ այլ ևս անոյս եղաւ թէ ունէ գործ կարող պիտի ըլլար գտնել: Օր մը կէսօրէն ետքը վաճառատունէ մը ներս մտաւ: Տղան ըրաւ սովորական հարցումը, «Ինձի տալու գործ մը ունի՞ք:» վաճառատան տէրը, Մր. Սթոն, որու ուղղութեամբ հարցումը, պատասխանեց. «Ոչ առ այժմ»: Յետոյ պատանին երեսին վրայ վճատութեան նշան տեսնելով՝ ըսաւ, «Եթէ կ'ուզես կէս ժամու չափ աշխատիլ, վար իջիր և շարէ այդ վառելիքայտերը, և ես քեզի քառորդ տողար (իրը վեց դահեկան) պիտի տամ»: «Շատ աղէկ, շնորհակալ եմ», պատասխանեց պատանին և վար իջաւ: Երբ վաճառատունը պիտի դուրսէր իրիկունը, վեր եկաւ և վաճառականին գնաց. «Շատ լաւ», ըսաւ մարդը, «քիչ մը արտորալով փայտերը շարեցիր: Ահա ստակդ»: «Ոչ, տէր», չմնցուցի տակաւին, և կ'ուզեմ լմնցնել վաղն առտու», ըսաւ պատանին, և չառաւ ստակը:

«Շատ լաւ», ըսաւ վաճառականը, և ա՛լ չխորհեցաւ գործին վրայ մինչեւ հետեւեալ առաւօտ: Հետեւեալ առաւօտ Մր. Սթոն դիպուածով վար իջաւ, և միաք բերելով փայտի դէզը, նայեցաւ փայտանոցին և ամխանոցին մէջ: Փայտը կարգ կարգ շարուած էր, փայտանոցը մաքուր աւրուած էր, և պատանին այդ միջոցին ամխանոցը շիտկելու կը զբաղէր: «Էյ», ըսաւ Մր. Սթոն, «ես քեզի փայտը դիզելէ զատ ուրիշ գործ չյանձնարարեցի»: «Այո, տէր, գիտեմ», պատասխանեց պատանին, «բայց տեսայ որ ասիկա ալ ընել պէտք է, և ես աւելի կ'ուզեմ գործել քան չգործել, իմ սիրտս հանգիստ չըլլար, Բայց ես իմ քառորդ տողարէս աւելի բան չեմ ակնկալեր»: «Բէէ», ըրաւ վաճառականը, և իր գրասենեակը գնաց առանց ուրիշ բան մը ըսելու: Կէս ժամ ետքը պատանին իր վարձքն ընդունելու համար ներկայացաւ մաքուրուած, և լաւ մը սանտրուած: Մր. Սթոն անոր տուաւ քառորդը. «Շնորհակալ եմ», ըսաւ պատանին, և դարձաւ երթարու համար. «Կեցիք», ըսաւ վաճառականը, «դուն գործելու տեղ մը ունի՞ս:» «Ոչ, տէր», «ես կ'ուզեմ որ քեզ քովս առնեմ»: Ահա,

մը գրելով կտոր մը թուղթի վրայ— «ասիկա հաշուեհաշուան քով կայնող պարոնին տար, ան պիտի ըսէ քեզի ինչ ընելիքդ»: Հիմակուհիմա քեզի շաբաթը վեց տողար պիտի տամ: Գործդ ըրէ վարը բրածիդ պէս. ահա այսչափ:» Եւ Մր. Սթոն մէկ կողմ գնաց պատանին առջեւէն, որ ապշութեան և ուրախութեան մէջ ընկղմած էր: Այս պատահեցաւ բաւական տարիներ առաջ: Մր. Սթոնի վաճառատունը հիմա այն ժամանակուանին կրկնապատիկէն աւելի ընդարձակուած է. և անոր վերատեսուչն է այն պատանին որ վառելիքայտ շարեց քառորդ տողար վարձքով: Հաւատարմութիւնը անոր նշանաբանն էր: Ատով յառաջ գնաց քալլ առ քալլ, բայց տակաւին հասած չէ կատարեալ յաջողութեան գագաթնակէտը: Վստահ ենք թէ օր մը ընկեր պիտի ըլլայ կամ իր գործատէրոջ հետ, եւ կամ ուրիշ վաճառատան մը մէջ:



ՇՈՂԵՇԱՐԺ ԱՐՈՐ ՄԸ

Այս երկրագործական գործիքին վրայով մեր ընթացողներուն չենք կրնար պատկերէն սորվածնէն աւելի խօսիլ, վասն զի չենք տեսած հաս մը: Այս արօրը կը գործէ շոգիով փոխանակ ձիերու կամ եզներու, և շոգեշարժ մեքենան չյոգնիր: Ամէն մէկ անգամ որ այս մեքենան կ'անցնի արտին մէջէն, 20 ակօսէ աւելի կը բանայ, և 50 եզներու ընելիք գործէն աւելի կը կատարէ միևնոյն ժամանակին մէջ, և զանիկա բանեցնելու համար երկու երեք մարդէ աւելի պէտք չէ: Հարկաւ միայն ընդարձակ արտերու կու գայ այսպիսի մեքենայի մը գործածութիւնը: Այս պատկերը Գալիֆորնիոյ մէջ առնուեցաւ, ուր ամէն մէկ արտ քանի մը հարիւր արտավար է: Չենք կարծեր թէ այսպիսի արօր մը կրնայ գործածուիլ քարոտ հողի մէջ:



Ինչո՞ւն Ս.ՂԱՐՈՒԿ ՀԱՆԵՑ ԲՈՎԸՐ Ծերուկ Բովըր քիչ անգամ կը հաշէր: Իր անեղ ձայնը այն ատեն կը լսուէր միայն, երբ մեծ բան մը պատահէր, և ամբողջ ընտանիքը կ'եղէր նստակալութեան թէ ինչ կայ, կը բնակէր դուրսը առանձին տնակի մը մէջ մարդայեանին վրայ, և գիշերը անագին չղթայ մը կը կրէր իր վեզը. վասն զի եթէ Բովըր հարկ դատէր հաշել, կրնար հարկ դատել նաև յարձակիլ: Գիշեր մը սաստիկ փոթորիկ կար, և հովը կը գոռար տանը բոլորտիքը: Կէս գիշեր էր երբ Բովըրի հաշելու ազդարար ձայնը լսուեցաւ: Տղաքը իսկոյն ելան և մայրին սենեակը եկան: Հայրը ըսաւ թէ հովը գրգռած ըլլալու է Բովըրը. և պէտք է որ ժամանակ մը սպասեն: Բայց շունը հետ զհետէ աւելի բարձրացուց իր ձայնը. ուստի տղոց հայրը հանդերձները հագաւ և խոհանոցն երթարով չորս կողմը նայեցաւ: Անսովոր բան մը չէր տեսնուեր: Լապտեր մը վառեց և կողմնական դուռը բացաւ: Ինչ կը կարծէք թէ գտաւ հոն: Փողոցի փոքրիկ կատու մը միայն, որ դրան մէջ սեղմուած էր և ողորմելի կերպով կը մլաւէր: Հայրը առաւ կատուի ձագը և գոչեց, «լմնցաւ, ծերուկ», և Բովըր նորէն իր խտեակը մտաւ:

Մայրը վար իջաւ և կատուի ձագին քիչ մը կաթ տուաւ և փոքրիկ անկողին մը պատրաստեց խոհանոցի ջերմոցին ետեւը, և այս կերպով փոքրիկ կատուն սկսաւ այդ տանը մէջ բնակիլ: Անձը երբեք չէին գիտեր թէ կատուի ձագը ինչպէս հոն եկած էր. և եթէ Բովըր գիտէր, բան մը չըսաւ: Փոքրիկ թափառականին համար ընելու գործին մէջ իրեն ինկած բաժինը կատարուած էր:

ՄԻՐՈՑ ԳՈՐԾԸ

Կը պատմուի թէ դար մը առաջ Էլերոպայի հիւսիսային կողմը հին մայր եկեղեցի մը կար, որուն կամարներէն մէկուն վրայ հիանալի գեղեցիկ դէմք մը քանդակուած էր: Երկար ժամանակ ծածկուած էր անիկա, մինչև որ որ մը արեւին լոյսը կողմնական պատուհանէ մը ներս մտնելով երևան բերաւ այն անզուգական գործը: Եւ տարուէ տարի, ցերեկները երբ կարճ ժամու մը միջոցին անիկա կը

